

ՍՈՒՐԲ ԽԱՉ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

2700 New York Ave., Cor. 27th St.
Union City, N. J.



HOLY CROSS
ARMENIAN CHURCH

2700 New York Ave., Cor. 27th St.
Union City, N. J.

PARISH HOUSE
318 27th Street
UNION 4-2480

Ատենազրուելիւն Եունիըն Սիթիի Ս, Խաչ Եկեղեցւոյ
Տարեկան անդամական ընդհանուր ժողովի:

.....

Եունիըն Սիթիի Ս, Խաչ Եկեղեցւոյ Անդամական ընդհանուր ժողովը տեղի
Փետր, 24 - 1957-ին Կիրակի Կէսօրէ ետք ժամը երկուքին Եկեղեցւոյս
սրահին մէջ, նախագահութեամբ Հոգշ, Տ, Վաչէ Աբեղայ Յովսէփեանի:
Ժողովը բացուեցաւ Հոգշ, Տ, Վաչէ Աբեղայի աղօթքով:
Միաձայնութեամբ օրուան Ատենապետ ընտրուեցաւ Պրն, Լուիսիկ Ծահապեան:
Պրն, Ծահապեան օրակարգը գործադրութեան դրաւ անմիջապէս: Միաձայնութեամբ
Ատենադպրուհի ընտրուեցաւ Տիկ, Ուզունեան:
Հոգաբարձութեան ատենադպիր Պրն, Նուպար Տօրեան Կարդաց նախորդ ժողովի
ատենազրուելիւնը, որը վաւերացուեցաւ անմիջապէս:

Օրակարգ

- 1,- Անշարժ Կալուածներու Առաջնորդարան փոխանցման հարց:
Որոշում,- Երկար վիճաբանութենէ ետք որոշուեցաւ յետաձգել յառաջիկայ
տարուան անդամական ժողովին:
- 2,- Աւելցնել Ծխական Խորհուրդի անդամներու թիւը 9-էն 11-ի:
Որոշում,- Մեծամասնութեան քուէով որոշուեցաւ որ Նոյնը մնայ:
- 3,- Կիրակնօրեայ Դպրոցի տեղեկութիւն:
Որոշում,- Պրն, Նուպար Տօրեան տուաւ բերանացի տեղեկութիւններ
Կիրակնօրեայ դպրոցի մասին եւ հպարտութեամբ արտայայտուեցաւ
ըսելով թէ աշակերտութեան թիւը օրէ օր Կ'աւելնայ եւ թէ
դպրոցը շատ լաւ մակարդակի վրայ է: Անդամները անգամ մը եւս
պարտք դրին հոգաբարձութեանս վրայ որպէսզի շինել տան Եկեղեցւոյ
ներքնամասը Կիրակնօրեայ դպրոցի համար:
- 4,- Դպրաց Դասի Հարց: Հարց տրուեցաւ թէ ինչու հոգաբարձութիւնը
չի հետաքրքրուիր Պրն, Մարտիրոս Խաթունապետի բացակայու-
թիւնով, քանի որ ան 35 երկար տարիներ ծառայած է Հայ Եկեղեցւոյ:
Որոշում,- Ըսուեցաւ թէ Հայ Եկեղեցին բաց է բոլորին համար:
Պրն, Մ, Խաթունապետի հարցը քուէի դրուելով պարտուեցաւ:
- 5,- Դրամապահարաններու Հարց: Ժողովուրդին ղրկել 52 պահարաններ Եկեղեցւոյս
տարեկան պիւտճէն շտապելու մտօք: Իւրաքանչիւր պահարան պիտի
ունենայ թիւ մը: Պահարանի դրութիւնը բնաւ Կապ պիտի չունե-
նայ տարեկան անդամատուրքի հետ եւ նաեւ տօնական օրերու
Դպրաց Դասի, Կիրակնօրեայ Դպրոցի, Տիկ, Կրթասիրաց Միութեան
բացառիկ պնակներու հետ:
Որոշում,- Պահարաններու դրութիւնը ձգուեցաւ Ծխական Խորհուրդի հոգա-
տարութեան:
- 6,- Եկեղեցւոյ Յիսնամեակի հաշիւներու տեղեկութիւն:
Օրդ, Բոզ Նօրեան գրաւոր Կերպով ներկայացուց Եկեղեցւոյս
յիսնամեակի հաշիւները, ըստ որոն զուտ շահ եղած է 633 Տոլար:

ՍՈՒՐԲ ԽԱԶ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
2700 New York Ave., Cor. 27th St.
Union City, N. J.



HOLY CROSS
ARMENIAN CHURCH
2700 New York Ave., Cor. 27th St.
Union City, N. J.

PARISH HOUSE
318 27th Street
UNION 4-2480

- 2 -

- 7,- Տեղեկություններ Ս, 2 շմիածնի Տպարանի ձոնտին մասին:
Պրն, Լուծիկ Ծահազեան բերանացի տեղեկություններ տուաւ ըստ որուն, առաջին փոքր հաւաքովին հանգանակուած է 880 Տոլար եւ Բէթրըսընի Հացեղանի շմիածնի 2100 փոխար: Այս հացեղանի շմիածնի մասերակուած էր Երևանի Սիթիի, Բէթրըսընի եւ Նիւ Յորքի եկեղեցիներու 4 ողմէ:
- 8,- Ընտրուած են Մխաթան Խորհուրդի 4 նոր անդամներու:
Մխաթան Խորհուրդի պաշտօնէ դադարեալ չորս անդամներու տեղ ծածուկ քուէով ընտրուեցան հետեւեալ անձերը:
Պրն, Նիշան Ոսկեան
,, Նուպար Տօրեան
,, Հէրրի Տէր Մաթթէոսեան
,, Հէրրի Սարգիսեան
Նոյնպէս ծածուկ քուէով հաշուաքննիչ Դաննախումբի 3 անդամները առաւելագոյն քուէով ընտրուեցան:
Պրն, Գրիգոր Պէնտեան
,, Արմէն Գալպեան
,, Գառնիկ Ներսէսեան:
- 9,- Առաջարկուեցաւ նամակով մը Առաջնորդարան գիտցնել թէ գաղութս 4ը փափաքի ունենալ իր մնայուն հովիւը: Առաջարկուեցաւ դիմել Սրբազան Հօր եւ խնդրել իրմէ թեկնածու հովիւներու եռապատիկ ցանկ մը որոնց առաջինը ըլլալ Հոգ, Տ, Վաչէ Աբեղալ 3ովսէփեանը: Առաջարկուեցաւ նաեւ որ դիմուի Սրբազան Հօր որպէսզի Վարդապետական աստիճան շնորհէ Հոգ, Տ, Վաչէ Աբեղալ 3ովսէփեանի:
Որոշում: Միաձայնութեամբ ընդունուեցաւ սոյն առաջարկը եւ որոշուեցաւ որ Մխաթան Խորհուրդի նոր Դիւանը շուտով կարգադրէ սոյն խնդիրը, եթէ պէտք ըլլալ գումարել բացառիկ անդամական թողով մը:
- 10,- Պրն, Լ, Ծահազեան ըսաւ թէ մօտ առնէն պիտի տալ 2000 Տոլար հանգուցեալ Մէլրի Ծահազեանի թողած 5000 Տոլարի 4 տակէն, եւ ըսաւ թէ եթէ հոգաբարձութիւնը յարմար տեսնէ թող գործածէ սոյն գումարը եկեղեցւոյ ներքնահարկը նորոգելու համար: Ուրախութեամբ ընդունուեցաւ այս բարի լուրը:

Երևանի Սիթիի տարեկան անդամական թողովը փակուեցաւ Հայր Սուրբի աղօթքով երեկոյեան ժամը 6,00-ին:

Ատենադպրուհի
Պրն. *Արմէն Գալպեան*
Նուարդ Ուզունջեան

Ատենապետ
Պրն. *Հարութ Զահարյան*
Լուծիկ Ծահազեան

Նախագահ
Պրն. *Վաչէ Աբեղալ*
Հոգ, Վ, Աբլ, 3ովսէփեան